

ԲԱԺԱՆՆԵՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Տր.
Վեցամսեայ 6 »
Արսասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 Տր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՅԻ ՎՃԱՐԵԼԻ

Մանուգնակ տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին անկի սեղաններու համար 20 Օն գեղը կը լրացայ:

Վառանյի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՏԱԳՅԻ ՆՍ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նստակ և գրակ գրկելի
Խմբագրութեան հասցիքն

Редакция на вѣстникъ

«Шаржумъ»

Варна

Redaction du journal

«Charjourn»

Varna (Bulgarie)

Կոմպիլիսի և չեմ տրակ

Արսասահմանի ձեռք

(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռք

(15 ՍԱՆԹԻՄ)

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ-
ԽԱՒՈՐԵԱՆ, ՍՕՅԻՍ. ԲԱՂԱԳԻ ՎԻՃԱ-
ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փափագողները կրնան
իրեն դիմել:

Զար-Պորիս փողոց Վառնա

Սօֆիա քաղաքի հինգերորդ վիճակահանութեան վեցերորդ կարգի մէջ շահող մեր բոլոր յաճախորդներէն կը խնդրուի որ ընդօրինակ ներկայացնեն իրենց տոմսակները, փոխարժէքը ստանալու համար:

Գլխաւոր գործակալ

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Վառնա, 26 Յունիս

ՊՈՒԼԿԱՐԱՅԱՅ ԺԻՄՆԱԶԻՍՏՆԵՐԸ

Մեր աշխատակից Պ. Ա. Մարգարեանի յօդուածով մը որ այսօրուան թուին մէջ հրատարակուած է, հրաւեր մը ուղղած է Պուլկարիոյ հայ ուսանողութեան, որուն վրայ կարծէ երկու խօսք ընել:

Պ. Մարգարեանի կը հրաւիրէ Պուլկարիոյ հայ ժիմնապիստները, որպէս զի իրենց մէջ «հայ ուսանողական միութիւն» մը կազմեն և յարաբերութեան մանրամասնութեան վերաբերելու հետ, աշխատին իրենց շրջանակին մէջ ազգայնութեան սփռելու պահանջել, հետաքրքրուիլ հայութեան անցեալով ու ներկայով և աշխատիլ անոր բարեկամութեան համար:

Բաւական տարիներէ ի վեր Պուլկարիոյ զանազան քաղաքները գտնուելով ցաւով տեսած եմ թէ, ամէն տեղ, պուլկար կիմնապիստութեան մէջ յաճախող հայ ուսանողները բոլորովին իրենց ազգութենէն կղզիացած, չեզոքացած, կարծես մոռցած են իրենց հայ ըլլալը և նոյնիսկ

ոմանք վատթարացած, այլասերած են ատելութիւն ու արհամարհանք արտայայտելու չափ գէտի ազգ մը զոր երբեք չեն ճանչցած և չեն ուզած ալ ճանչնալ: Իրենց լեզուն հայերէնը չէ, զոր խորթ ու տգեղ կը գտնեն իրենք, իրենց խօսակցութեան նիւթը հայը չէ, զոր արհամարհելի տարր մը կը նկատեն, իրենց սրտին թիւերը չեն թրթռար հայուն վիճակով, որ կարեւորութեան զուրկ է իրենց համար: Միշտ օտար ընկերներու հետ, միշտ օտար ազգեցութեան ծոցը, ասոնք ախրող ընկերական օտար շրջանակին ու գաղափարական հոսանքին հետ կը մղուին հետեւափորէն: Ընկերական, տնտեսական շատ տարածուած, շատ տափակցած ֆորմիւլներ, փարատօքաներ իրենց դեռ օգային երեւակայութիւնը կը պարուրեն և իրենց դպրոցական երազներուն մէջ, աշխարհաքաղաքացիական իտեալով կը հրճուին, իտեալ մը որ «պահովապէս պիտի քայքայուի, խորտակուի, երբ զործնական կեանքը իր անդուք պահանջներով անոնց ուսը ծանրաբեռնէ»:

Բայց Պուլկարիոյ հայութիւնը կրնայ շատ տարբեր դիրք ու վիճակ ունենալ, մանաւանդ բարոյապէս, եթէ իրմէ ելած ուսանողութիւնը կարողանայ իր կոչումը ճանչնալ և պատրաստուած ըլլալ անոր: Փոխանակ ժիմնապիստութեան սեմէն իսկ իր ազգութիւնը մոռնալու, եթէ աշխատի շարունակել հայրենագիտութեան այն տարբերը զորս ազգային նախակրթարանը մատակարարած է իրեն, եթէ ջանայ ճանչնալ ու ճանչցնել իր օտար ընկերակիցներուն հայը իր իսկական ձիրքերով ու յատկութիւններով, հարկաւ դպրոցէն դուրս ալ, անիկա պատրաստուած և վարժուած պիտի ըլլայ իր սոհմային գործերով հետաքրքրուելու: Այսօր չի կայ հայ ժիմնապիստ մը, որ Պուլկարիոյ մէջ ձայն ունենայ գէթ իր ապրած քաղաքին ազգային գործերուն մէջ:

Գրեմ հայերը այս կէտին մէջ

պուլկարներէն օրինակ առնելին: Ինչպէս որ պուլկար ժիմնապիստները ընկերութիւններ ունին, որոնցմով բոլոր վարժարաններու ուսանողները իրարու կապուած, իրարու հետ հարգողակցութեան մէջ պահուած են, այնպէս ալ իւրաքանչիւր քաղաքի հայ ժիմնապիստները թող միանան և պուլկարահայ ուսանողական ընկերութիւն մը կազմեն, իրենց յատուկ գործունէութեան ծրագրով:

Ուսանողութիւնը կեանքի ամենէն ազատ ու անկաշկանդ և նոյն իսկ ամենէն բացառիկ շրջանն է: Ուսանողները շատ բան կրնան ընել, որովհետեւ հազուադէպ գիւրութիւններ ունին: Թող կամքը քիչ մը թափանցէ իրենց սրտէն ներս, և յառաջիկայ երկամսեայ արձակուրդի տեսն, պուլկարահայ ուսանողները թող ամէն քաղաքի հետ յարաբերութեան մանեն նոր շրջանէն սկսեալ յիշեալ ընկերութեան հիմը դնելու համար:

ՇԱՀԱՊ

ՔՐՈՆԻԿ

(Շար. նախորդ սրիւն և վերջ)

Ակնարկ մըն ալ արտաքին աշխարհի վրայ պարտոցներով ի զուրկը փնտռեմ բարեգուշակ նշան մը մեր գատին: Համակրանքի միակ գործնական արտայայտութիւնը, այն ալ ոչ պաշտօնական եւրոպայի կողմէ՝ Pro Armeniaն է, որ արդէն իր ութամսակը կը թեւակոխէ: Աւելորդ պիտի ըլլար հոս բացատրել միանայի գրական ասուցերուն տնտեսները իր ճակտին կրող այս հրատարակութեան կարեւորութիւնը մեր հարցին համար: Բայց տարօրինակ թող չթուի եթէ այդ ակներեւ կարեւորութիւնը ընդունելով հանդերձ՝ վաճառք մըն ալ նշմարեմ այդ կողմէն մեզի համար:

Նստ բնական է որ Pro Armeniaի երեւումը սգեւորութեամբ ողջունուէր հայ ժողովրդին կողմէ և նոյնչափ բնական որ այդ

ընդհանուր սգեւորութիւնը բաժնէին նաեւ յեղափոխական շրջանները, որոնք չեն արհամարհեր մեր գատին նպաստելու հանգամանք ունեցող և և է ձեռնարկութիւն: Սակայն մեր յեղափոխակերպութեան այս վերաբերումէն շատ տարբեր հետեւութիւններ հանուեցան: Կարգ մը «գործիչներ», որոնց ամբողջ իտեալն է հայկական ինդիւրի մօտ գտնուիլ... Հայաստանէն Բարիկ փոխադրելով զայն առթիւ չեն փախցնել իրենց ուղղութեան ուղիւ մը ընելու: Կը փորձեն հաւատացնել ժողովրդին թէ Հ. Յ. Գաշակցութիւնը համոզուած վերջապէս իր գործունէութեան նախկին եղանակին ձախողութեանը կուգայ ընդգրկելու սկիզբէն ի վեր իրենց ջատագոված ուղղութիւնը: Ու նոր ծրագիրներու ամբողջ շարք մը կը շողջողացնեն մեր աչքերուն: Ինչե՞ր կան ընելիք, ինչե՞ր, ինչե՞ր Փարիզի մէջ, եթէ միայն միջոցներ տրուէին իրենց... Իրամ: Այսչափ արիւնով ու զոհողութիւններով յառաջացած հայկական ինդիւրը վերջոյն քանըհինգ տարի ետ տանիլ, մինչեւ լալկան մուրացկանութեան այն փուլը, ուր ան Պերիլիի վեհաժողովին ներկայացաւ...: Շիտակը լաւ յառաջ գիտութիւն, ու մոռածեցէք որ այս խեղափառի ուղղութիւնը պաշտօնանոյ արարածները դեռ մարդու չեն ուզեր ասլ յիշափոխական ախպուր:

Ահա՛ այս վտանգն է որ կուգեմ մատնանիշ ընել: Պատմութիւնը շիւ աչքերով թզթատողները կրնան միայն սյնդել թէ՛ մեր գատին մինչեւ այսօր առկա մնալուն պատճառը եւրոպային մեր վիճակէն տեղեակ չըլլալն է: Պաշտօնական եւրոպան իր դեսպաններուն ու հիւպատոսներուն շնորհիւ մեզմէ լաւ գիտէ Հայաստանի կացութիւնը. եւրոպական թերթերը օրը օրին կը հազարքեն հոն անցած դարձածը: Սակայն գիւրանագիտութիւնը այն մասնակ միայն կը շարժի «երբ ստիպուի շարժիլ»:

իսկ հանրային կարծիքը ջարդերու կամ կողոպտումներու յաւերակեան տխուր լուրերով չէ որ պիտի խանդավառու մեղի համար Այս վերջին պարագային ապացոյցը շատ հեռու չերթալու համար Pro Armeniaի մէջ իսկ կարելի է պարզ տեսնել խմբագրական մասնախումբին անդամներէն մէկը գեռ տող մը անգամ չի գրեց, միւսները մէյմէկ յօդուածով խառնումին կատարած եղանակն որովհետեւ այդ մարդիկը իրենց անունները տուած են թնթիւն լոկ մարդասիրական գործի մը նպատակութեամբ կամեցողութեամբ, բայց հեռու են զգալէ մեր նկատմամբ այն զեղուհի համակրութիւնը, որ ատանց ու է գիմումի կամ խնդրանքի ինքնուրուարար գրիչ շարժել կուտայ գրագէտին: Թրջութով ու խօսքով ազգ. փրկելու ուղղութեան ներկայացուցչները ապուշ յաւակնութիւնը ունին կարծելու, որ եթէ եւրոպայի մէջ այսօր քիչ մը կը հետաքրքրուին մեզմով, այդ փոփոխութիւնը մենք լոկ իրենց պրօպագանդին կը պարտինք: Հայկական շարժումներէն առաջ ալ պակաս չեն եղած եւրոպայի կարգի պրօպագանդիստներ: Հայերէնէ հատորներով թարգմանութիւններ ալ եղած են զանազան լեզուներու, սակայն այդ բոլորը ընդունելութիւն գտած են միմիայն այն շրջաններուն մէջ, ուր բացի մեզմէ՝ Հօտէնտօսներու և ուրիշ վայրերի ցեղերու կեանքն ալ հետաքրքրութիւն կը յարուցանէ լոկ գիտական տեսակէտով: Իսկ եթէ այսօր մեր անունը քիչ շատ ժողովրդականութիւն գտած է, այդ շնորհիւ այն հանգամանքին է միայն որ հայկական թղթէ

հարցը կենդանի շարժում մը դարձաւ ու պահ մը ամբողջ դիւանագիտական աշխարհն ու մամուլը զբաղեցուց: Այս տարրական ճշմարտութիւնը սակայն այսուհետեւ չէ որ պիտի կրնան ըմբռնել մեր անդամներէն իմաստակները: Տեղն է հոս պատիկ նկատողութիւն մըն ալ ընել «Բո Արմէնիա»ի ուղղութեան մասին: Մինչև հիմա լոյս տեսած թիւերուն բովանդակութիւնը կը կազմեն գրեթէ միմիայն երկրէն եկած նամակներ ու լուրեր: Այդ նամակները սակայն այնքան իրարու նման են ու այնքան միօրինակօրէն ճշող, որ վախճան թէ եւրոպայի ընթերցողները չի կարողանան մինչև վերջը տանիլ այս շարաշուք ընթերցումը: Մեր տառապանքը՝ ինչպէս ըստի՝ ալ ծածուկ ոճի մը աղջամուղջէն գուրս է ելած. ինչ որ դժբաղդարար գեռ մինչև այսօր անծանօթ կը մնայ եւրոպային՝ պատճառ ըլլալով որ վատութեան ամօթ մըն ալ խարանուի մեր ճակատին՝ մեր անհասարկութիւն մէջ: Ինչպէս անձնութեան հիանալի տիպարներն են, գիմագրութեան փոքրիկ բայց հերոսական գէպերը և վերջապէս փոքր ազգի մը այն ամբողջ սըրտաշարժ մեծ ճիգը, որ հայ յեղափոխութիւն կը կոչուի: Ահա՛ աստեղ, մեր նորագոյն պատմութեան այս կազմուրիչ ու յուսատու գրուագներն են որ պէտք է պարզել լոյս աշխարհին: Թիւրիմացութիւններու տեղի չտալու համար, քրոնիկս փակելէ առաջ, կը շեշտեմ թէ ամէն կերպով պէտք է գնահատել ու քաջալերել «Բո Արմէնիա»ն ու

նոյնանպատակ ձեռնարկութիւնները: Բայց պետաւի սխալ մը պիտի ըլլար չափազանցել անոնց գերն ու նշանակութիւնը, կարծելով թէ այդ ուղղութեամբ ըրած կըլլանք ամէն ինչ որ մարդկայնօրէն մեր դատին յաջողութեանը համար կարելի է ընել: Գրչի հոյակապ վարպետ մը՝ Տիգրան Երկաթ՝ իր ամբողջ կեանքը այդ խաղաղ գործունէութեան նուիրելէ յետոյ, հետեւեալ տխուր տուղերով կը կտակէ մեզի իր դառն փորձառութիւնը: — Հայեր, չկայ՝ բարոյականութիւն, չկայ՝ արդարութիւն ժողովուրդներու միջեւ: Կոպիտ ուժ ցուցնելով տա՛նք մենք մեզի մեր հողին վրայ անկախ ապրելու իրաւունք կամ ջանանք միտնիլ հոն պատուով: ԿԱՐԻԾ Յարարութեւ, 17 Յունիս

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հայութեան ամէն անկիւններուն մէջ կազմակերպիչ ոգին սկսեց է մուտ գործել: Հայը այլեւս գիտակից իր վիճակին եւ շահերուն՝ ջանքեր կընէ իր ցիրուցան ուժերը ամփոփել, խըտացնել կուտ ամբողջութիւն մը կազմելու համար: Կազմակերպիչ ոգին սկսած է իր օգտաշատ գործունէութեան, եւ ասիկա ամենէն միթաբիչ հրեւոյթներէն մին է մեր ազգին համար: Ահա հայ ուսանողներն ալ շարժեցան եւ կազմեցին եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը: Ես կուզեմ խօսքս մասնաւորել այս Միութեան վրայ: Բարեբաղդարար Ե. Հ. Ո. Միութիւնը գործով մեզ ապացուցուց թէ Պ. Ուսանողի «Լրօջակ»ի մէջ յայտնած վախճանատեղի է եղած. կամ Միութեան ղեկավարները աղնուա-

բար զգացուելով Պ. Ուսանողի շատ առողջ գիտողութիւններէն, փոխած են իրենց առաջնորդող եւ մղիչ ոգին: Այս ցոյց կուտան այն հայրենագուտներէրը, որոնցմով Միութիւնը վերջերս զբաղեցաւ եւ այն ուղիքը զոր Մակեդոնական Բարձր. Կոմիտէին զրկեց ուսանողութիւնը: Եւ է՛ն ուրախալի կեալ այն է, որ մեր ուսանողները առանց հրապարակային աղմուկի, առանց յաւակնոտ ինքնագովտեթիւն սկսեցին լուրջ եւ խոհեմ կերպով կազմակերպուիլ ու գործել: Մեր ցաւերու և վիշտերու այս թախալի օրերուն մէջ մենք ունեցանք կարգ մը վիճակներ, որոնք հրէշային դիմակներու տակ ծածկուած՝ մեծարարաւ ինքզինքներն ազգին վարդաւան ազատարարները հոչակեցին. ծանր հարուածներէ շուարած ժողովրդին գրութիւնը իրենց ցած եսին ի նպաստ շահագործելու միակ նպատակով: Վայրկեան մը, ամէն ազնիւ հայ, շառլաղանութեան այս լարիւրինդոսին մէջ ու է լոյս չի տեսնելով, եւ չի զիտնալով թէ որ կողմին նուիրել իր ուժը՝ վհատելու աստիճանին եկեր հասեր էր. վհատութիւն, որ հրէշաւոր թշնամիի մը պէս կը քանդէ ամէն լաւ գործ: Այսօր Ե. Հ. Ո. Միութիւնը իր լոկի գործունէութեամբ մեզ ցոյց կուտայ թէ՛ մեր մէջ սկսած է շատ առողջ ոգի մը տիրել: Մենք բոլոր սրտով մեր ուսանող ընկերներուն յարատեւութիւն եւ յաջողութիւն ցանկալով, աւելորդ չենք համարեր քանի մը խորհրդածութիւններ ընել: Այն առարկութիւնը թէ ուսանողները նուիրուելով հասարակական հարցերու կը տուժեն իրենց մասնագիտական ճիւղերու եւ զարգացման մէջ, բոլորովին անտեղի է եւ սխալ: Ընդհակառակը անոնք իրարու մոտ գալով, իրարու հետ զաղափարներ փոխանակելով՝ աւելի կը զարգանան, աւելի կը յառաջդիմեն: Երիտասարդ ոգին միշտ շարժիլ, միշտ ու է բանով զբաղիլ կուզէ, եւ երբ դայն չի գտնէ, ինքզինքը կը նետէ շուայտութեան եւ զեղիւթեան գիրկը հոգով եւ մարմնով փճանալու հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Ի. ՎԱԶՈՎ
ՈՉ ԿՐԹՈՂՃԱՆ ՈՉ ԿՐ ՍՄԵՆ
VIII
(Շար. նախորդ քիւնի)
Մաքէտօնսքին երչիկի վերջին կտորն ալ կըլից, թաշկինակով պիտի խորը ու բերանը սրբեց ու երկար դանակը կարմիր գօտիին մէջ հրելով, ըսաւ: — Ուրկէ՞ գալս կը հարցնես. Մուտավիտայն կուգամ... եւ եթէ ինչո՞ւ հարցնես, որովհետեւ ձմեռուան կէսին գործէս հանեցին աս նղոված մամալիկարները... — Գործէ՞ր հանեցին: — Եթէ ճիշդը կուգես, իբրեւ յետին սրիկայ արտաքսեցին: — Նորէն քաջութիւն մը ըրած ըլլալու ես: Մաքէտօնսքի իմացա՞ր... հոս շուտով փառաւոր գործի մը

պիտի ձեռնարկենք... գիտե՞ս որ Պուլկարիոյ մէջ արգէն պատրաստութիւններ կըլլան, ի՞նչ ըլլալիքը ասկից պէտք է տեսնենք... հասկցա՞ր: — Կեցցէ՛, պոռայ Մաքէտօնսքին: — Պէտք է խուճ մը կազմակերպենք, եւ մենք մեզի... Հարուսաները դարձեալ պիտի հակառակին, իմացա՞ր, առանց ատոնց այդ գործը գլուխ հանելու ենք... խուճը Սերպիայէն պիտի անցնի: — Պրավո՞, Պրէշքով... ես շատ իբրաւացի նկատած էի որ դուռն հիսնալի հայդուկ մը կըլլա՛ս, պրավո, հա՛, ի Սերպիա, այո՛, Սերպիայէն մտնանք: Այս բունաւոր շուները (թուրքերու նկատմամբ) թուշուսի թուշուսիին անգամ թոյլ չեն տար սխաղաղ, ճերմակ դանուրի՞ վրայէն ինչպէ՞ս գրքեր մէջ գրած էի, է շետակը՝ երկրորդ շիշն ալ պարպելը կարծէ... Նա շիշը վերցնելով գոչեց: — Կեցցէ՛ ազատութիւն, Մինչև վերջին կաթիլը ձեռք: Պրէշքով բարձր քահանայ մը խընդաց: — Դուռն աս սատանայի անօթու-

թիւնով ու ծարաւով խուճին ամբողջ պաշարը պիտի հատցնէիր: Ինչ մը սակաւակեաց եղիր, գիտնալու ես որ քու հայրենակիցդ՝ Մեծն Աղեքսանդր Մակեդոնացին անժուժկալութենէ մեռաւ: — Այն ատեն ես ալ կը մեռնիմ, ինչպէս որ մեծ մարդերը կը մեռնին: Դո՛ւն եղբայր, երեւի դես չես գիտեր թէ ի՞նչ բան է, ի վան Գուրուչէլա սուրբին պէս հինգ օր ծոմ պահելը... Ես գիտեմ, ըսաւ, եթէ մեռնիլ ուղղակի դրախտ գացած պիտի ըլլայի: Դուռը կամացուկ մը բացուեցաւ եւ վլատիքով ներս մտաւ: — Օ՛, Օ՛, Մաքէտօնսքի, բարի ես եկեր, ո՛ւր էիր կորած, թափառական հրեայի պէս: Ու վլատիքով խանդով անոր ձեռքը սեղմեց, բայց ատով չի գոհացաւ ու երեք անգամ բերնէն համրուեց: — Հա՛, դուռն տեղ մը կոնծեր ես, էյ ի՞նչպէս են գործերը, ի՞նչ լուր: — Բոլոր Մուտավիտի հրեայներէն շատ բարեւ թեզի: Էյ՛ վլատիքով, մա՛րկ ըրէ՛, ես ալ պատրաստ եմ, Պրէշքովը ինձի նոր ծրագրի մասին պատմած է, ես ալ կը վաւերացնեմ... Սերպիայէն անցնիլը շատ յարմար է:

— Նստի՛ր, նստի՛ր, ատոր վրայ պիտի խօսակցիք, ըսաւ ուսուցիչը, ու աթոռ մը առնելով կախեց ուրբը վառարանին առջեւ, որ ուժգնութեամբ կը վառէր: Բայց երբ որ աչքը հանդիպեցաւ բաց ու գատարկուած պահարանին կէս, ժպիտով ու կէս զայրոյթով մը գոչեց: — Այ անգամ, դուռն նորէն զիս կողոպտեց ես: — Կեցցէ՛ Գուրուչէլան, պոռայ Մաքէտօնսքին, որուն փայլուն աչքերը բոցեր կարձակէին, վլատիքով ծոցէն նստակ մը հանեց, որ բացուած էր, ուղադրութեամբ բան մը կարգաց, ծալից, նորէն պահեց, յետոյ Պրէշքովին ու Մաքէտօնսքին դառնալով, լրջօրէն ըսաւ: — Երէկ Պուրէշէն նստակ մը ստացայ, հոն մեղրինները եռանդով կը գործեն, որոշեց են որ դարնան անպատճառ Սերպիա խուճ ուղարկուի Պէտք է սրտով գործին փակիլ, Բանաթօթ վոյժօտան ինքը Սերպիայէն կը պատրաստուի գալու: Պէտք չէ թողուլ որ ազգը Պուլկարիոյ մէջ մրակէ՛ Մաքէտօնսքի, դուռն Պրա-

մար : Հասարակաց գործով զբաղելը բարձր անաբխութիւն մըն է . եւ մեր ուսանողները նուիրուելով հասարակաց գործին , ոչ միայն չեն տուժեր իրենց մասնաճիւղերուն մէջ , այլ կը շահին շատ բան , կը դառնան տիպար երիտասարդներ տոգորուած գեղեցիկ ու խելալ ձգտումներով , առողջ եւ թարմ հոգեով , առողջ եւ թարմ մարմնով :

«Միութեան» յարատեւութիւնը ընդ երկար ապահովելու համար , ինքնին հասկնալի է թէ ետանդուն բրորականտա պէտք է ընել հայ ուսանողական ամէն խաւերու մէջ եւ շահիլ նոր անդամներ : Միութեան իւրաքանչիւր անդամ պէտք է իր շրջանի մէջ ընէ ասիկա : Զանցառութեամբ , անհոգութեամբ պէտք չէ որ ուսանողութիւնը մէկզմէկու վրայ ձգէ Միութեան քարգաւաճումին գործը , այլ ամէն անգամ պէտք է ջանայ իր բաժինը ունենալ այդ գործին մէջ : Առնական ինքնաճանաչութիւնը այսպէս ընել կը պահանջէ :

Երկրորդ կէտ մը եւս կայ զոր կարծէ նկատողութեան առնել : Ուսանողական շրջանը կը տեւէ ընդհանրապէս 3 — 4 տարի : Այս շրբջանը աւարտելէ ետք , Միութեան անդամը յաւիտենական հրաժեշտ տալու է իր ընկերներուն : Ոչ , արամբարնօրէն խորհելով շատ սխալ կըլլար այդ ընթացքը . հայ ուսանողը սկսուած գործին կէսը միայն կատարած կըլլար իսկ կէս ընել կը նշանակէ գէշ ընել : Այս պարագային պէտք է ընել այն , ինչ որ կընեն եւրոպայի ուսանողական ուրիշ կազմակերպութիւնները : Պէտք է զանազանել նոր եւ հին տունը : Նոր տունը կը կազմեն գործի վրայ գրտնուող ուսանողները , հին տունը կը կազմեն ուսանողական ասպարէզէն հեռացած Միութեան հին անդամները որոնք տաղիւններուն հետ յարաբերութիւն պահելով , գործէն կօզնեն Միութեան եւ կուսակցական համագումարներու մէջ իրենց ձայնը :

Միութեան Հայկէրէրկի գումարումին մէջ մենք մեծ հրճանքով տեսանք որ Լեհաստանի եւ կալիֆորնիայի հայ ուսանողութիւնն ալ ներկայ էր , որոնք

կը խոստանային եռանդուն աշակցութիւն : բայց զժողովրդաբար անկէ ի վեր շատ բան չիմացանք իրենցմէ : Միութիւնը շատ կարեւոր գործ կատարած կըլլայ , եթէ ամեն ջանք թափելով իր շուրջը ժողովէ Լեհաստանի հայ ուսանողութիւնը , որ մեծ գեր կարող է խաղալ քաջազն Անեցուց օտարութեան մէջ մարած ազգային եւ հայրենասիրական ոգին արթնցնելու , դէպի հայրենիք սէր ներշնչելու բարձր գործին մէջ :

Երաւարտութեամբ թուեցաւ մեզ Ֆրանսայի եւ Անգլիոյ հայ ուսանողներու գէպի Ե. Ն. Ս. Միութեան ցոյց տուած անտարբերութիւնը : Ասիկա պատիւ չի բերիր իրենց , պէտք է շարժիլ եւ չուտով եզրայրական ձեռք մեկնել Ե. Ս. Միութեան , թերեւս ատարկութիւն տեղւոյ հետաւորութիւնը անհաճոյ դժուարութիւններ կը պատճառէ : Այն ատեն կրնան Ֆրանսայի եւ Անգլիոյ հայ ուսանողները իրարու մէջ կազմակերպուիլ եւ ընդունելով Ե. Ն. Ս. Միութեան սկզբունքներն ու կանոնագիրը կազմել անոր մէկ ճիւղը , որ ընդհ. ժողովին կը զրկէ իր կողմէ ներկայացուցիչ մը եւ կը հաղորդէ ընդհ. Միութեան համաժողովին իր առաջարկը ու կատանայ Միութեան հրահանգները : Մենք կը սիրենք յուսալ թէ Ֆրանսայի եւ Անգլիոյ հայ ուսանողները չուտով գործի կսկսին եւ կը կատարեն այն , ինչ որ վայել է պարտաճանաչ եւ զարգացեալ երիտասարդներու : Մանաւանդ հիմա , երբ ազգ եւ հայրենիք վտանգի մէջ է , կարծէ գործել , Գերմանիոյ ազատութեան կողմի ժամանակ , գերման ուսանողները ձգելով համալսարաններու գրասեղանները խումբ խումբ գացին ազգային գրոշին տակ հաւաքուիցան եւ ցցուցին գերման ժողովրդին թէ իրենց զաւակները յօժար սիրով կը զոհեն ամէն ինչ հայրենիքի փրկութեան եւ վերածնութեան գործին համար : Ուսանող երիտասարդներու քաջազնական օրինակը մեծ ազդեցութիւն ըրաւ ժողովրդին վրայ : Ինչով կը տարբերի հայ ուսանողը գերմանացիէն , միթէ մենք պիտի ուրանա՞նք մեր տոհմային անձնուիրութեան ոգին :

Երբ խոսքը ուսանողներու մասին է , անկարելի է հաս ի նկատի չտանել ուրիշ կէտ մըն ալ : Գիշ առեւելն մենք կուսենսնք պուլկարական եւ այլ կիլիսազիոններու , ամերիկեան գօլճններու մէջ բաւական թիւով ուսանողութիւն մը , որ ենթարկուած ըլլալով օտար ուսուցիչներու , օտար լեզուներու եւ գրականութեան ազդեցութեան , ամենէն շատ պէտք ունի հաստատ կապի մը , որ գիրենք շղիայէ իրենց ազգին եւ հայրենիքին հետ , եւ որ դասախօսութիւններով , գործերով ծանօթացնէ այդ մատուցողներուն իրենց ազգի պատմութիւնը , հայրենիքի աշխարհագրութիւնը ու սորվեցնէ անոնց ջերմ սիրով սիրելի մայրենի լեզուն կարգալ Գումա-Բաթիպան , Բաֆֆին եւ այլ հայաշուք ազգ. հեղինակներ : Ասոր համար կառավարկենք մեր Պուլկարիայի , Ամերիկայի եւ ուրիշ տեղերու հայ ուսանողաց նոյնպէս իրենց մէջ միութիւններ կազմել եւ կապել զանոնք Ե. Ն. Ս. Միութեան հետ , որմէ կատանան հրահանգներ եւ կեդրոնին կը զրկեն իրենց գործունէութեան տեղեկագիրները : Անփորձ ուսանողներ կը կարօտին անչուշտ ձեռնաս առաջնորդներու խորհրդին եւ օգնութեան . այս պարագը կը ծանրանայ այն ատեն մեր ուսուցիչներու , խմբագիրներու եւ եկեղեցականներու () վրայ :

Կարծէր նաեւ խօսիլ Ռուսիոյ հայ ուսանողներու մասին , բայց ես անոնց վիճակին եւ տիրող պարագաներուն բոլորովին անտեղեկ ըլլալով խօսքը կը ձգեմ ուրիշի մը , որուն ծանօթ ըլլայ Ռուսիոյ հայ ուսանողութեան պէտքերը ու պարտքերը :

Երբ խոսքը ուսանողներու մասին է , անկարելի է հաս ի նկատի չտանել ուրիշ կէտ մըն ալ : Գիշ առեւելն մենք կուսենսնք պուլկարական եւ այլ կիլիսազիոններու , ամերիկեան գօլճններու մէջ բաւական թիւով ուսանողութիւն մը , որ ենթարկուած ըլլալով օտար ուսուցիչներու , օտար լեզուներու եւ գրականութեան ազդեցութեան , ամենէն շատ պէտք ունի հաստատ կապի մը , որ գիրենք շղիայէ իրենց ազգին եւ հայրենիքին հետ , եւ որ դասախօսութիւններով , գործերով ծանօթացնէ այդ մատուցողներուն իրենց ազգի պատմութիւնը , հայրենիքի աշխարհագրութիւնը ու սորվեցնէ անոնց ջերմ սիրով սիրելի մայրենի լեզուն կարգալ Գումա-Բաթիպան , Բաֆֆին եւ այլ հայաշուք ազգ. հեղինակներ : Ասոր համար կառավարկենք մեր Պուլկարիայի , Ամերիկայի եւ ուրիշ տեղերու հայ ուսանողաց նոյնպէս իրենց մէջ միութիւններ կազմել եւ կապել զանոնք Ե. Ն. Ս. Միութեան հետ , որմէ կատանան հրահանգներ եւ կեդրոնին կը զրկեն իրենց գործունէութեան տեղեկագիրները : Անփորձ ուսանողներ կը կարօտին անչուշտ ձեռնաս առաջնորդներու խորհրդին եւ օգնութեան . այս պարագը կը ծանրանայ այն ատեն մեր ուսուցիչներու , խմբագիրներու եւ եկեղեցականներու () վրայ :

Կարծէր նաեւ խօսիլ Ռուսիոյ հայ ուսանողներու մասին , բայց ես անոնց վիճակին եւ տիրող պարագաներուն բոլորովին անտեղեկ ըլլալով խօսքը կը ձգեմ ուրիշի մը , որուն ծանօթ ըլլայ Ռուսիոյ հայ ուսանողութեան պէտքերը ու պարտքերը :

Ա. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
Զուեցերիա , Յուլիս

() կը կարծէք որ եկեղեցականները այդ կարգի ինչպիսիքու մէջ , խառնակութեան տարբեր բան մը կարողանան ընել : Ի՞նչ :

Երբ խոսքը ուսանողներու մասին է , անկարելի է հաս ի նկատի չտանել ուրիշ կէտ մըն ալ : Գիշ առեւելն մենք կուսենսնք պուլկարական եւ այլ կիլիսազիոններու , ամերիկեան գօլճններու մէջ բաւական թիւով ուսանողութիւն մը , որ ենթարկուած ըլլալով օտար ուսուցիչներու , օտար լեզուներու եւ գրականութեան ազդեցութեան , ամենէն շատ պէտք ունի հաստատ կապի մը , որ գիրենք շղիայէ իրենց ազգին եւ հայրենիքին հետ , եւ որ դասախօսութիւններով , գործերով ծանօթացնէ այդ մատուցողներուն իրենց ազգի պատմութիւնը , հայրենիքի աշխարհագրութիւնը ու սորվեցնէ անոնց ջերմ սիրով սիրելի մայրենի լեզուն կարգալ Գումա-Բաթիպան , Բաֆֆին եւ այլ հայաշուք ազգ. հեղինակներ : Ասոր համար կառավարկենք մեր Պուլկարիայի , Ամերիկայի եւ ուրիշ տեղերու հայ ուսանողաց նոյնպէս իրենց մէջ միութիւններ կազմել եւ կապել զանոնք Ե. Ն. Ս. Միութեան հետ , որմէ կատանան հրահանգներ եւ կեդրոնին կը զրկեն իրենց գործունէութեան տեղեկագիրները : Անփորձ ուսանողներ կը կարօտին անչուշտ ձեռնաս առաջնորդներու խորհրդին եւ օգնութեան . այս պարագը կը ծանրանայ այն ատեն մեր ուսուցիչներու , խմբագիրներու եւ եկեղեցականներու () վրայ :

Աստուծո կողմէր Պրըջքով արիւնցաւ , զարմանքով զիտեց , որ Վլադիքով

Ն. Կ. Բ. ՄԵԾ Ի. Ա. ՄԻՒԱՅԵԼՈՎԻԾ
ՎԱՌՆԱՅԻ ՄԷՋ

Իր անկախութեան տիրանալէն ի վեր՝ առաջին անգամ ըլլալով Պուլկարիա անցեալ չորեքշաբթի օր արժանացաւ իր ազատարար կայսրութեան արքայական հիւրերուն այցելութեան : Այս անթիւ տեղական եւ օտար մամուլի մէջ արտայայտուելիք զանազան տեսութեանց ու կարծիքներուն պիտի շանանք յառաջիկային արձագանքն ըլլալ «Շարժում» մէջ : Ներկայ թուով նկարագրութիւնը կընենք միայն այն ընդունելութեան՝ որով Պուլկարիա ուզեց պատուել իր հիւրերը :

Չորեքշաբթի օր , մամր 11/2ին , «Բօստիսլա» պրահուսը թորփլլանաւով մը միասին հասաւ էվքսիսկրատի առջիւ , ուր կը սպասէր պուլկարական ձէրտինանտ իշխանը «Նատեժտա» յաճառակին մէջ : Միեւնոյն ժամանակ , «Պուլկարիա» վաճառականական շոգենսուր ժողովուրդէն խուռն բազմութիւն մը մէջն առած՝ զնաց Մեծ իշխանը գիմաւորելու : Կ. Բարձրութիւնը էվքսիսկրատի առջիւ հասնելով՝ ձէրտինանտ իշխանին , ինչպէս նաեւ զայն շրջապատող անձնուրուն եւ զինուորներուն , և յետոյ իրեն ընդ առաջ եկած ժողովուրդին հետ բարեուեցաւ : Յերեկուան նախաճաշէ և հանգիստէ մը ետքը , երեկոյան ժամը 4ին , Ն. Կ. Բարձրութիւնը ցամաք ելաւ , հոն պուլկար կառավարութեան ներկայացուցիչները , նախարարներով , երեսփոխաններով , Վառնա՝ քաղաքին քաղաքապետութիւնը իր բոլոր անդամներով , Մեծ իշխանին ընդ առաջ եկան :

լայնէն քայլ մը չը պիտի առնես : Հոս պէտքը կայ քեզի . . .

Մաքէտօնսքին գարմանքով վլաւտիքովին նայեցաւ , եւ անոր վերջին խօսքերէն վերաւորուածի պէս եղաւ : — Կը հեռանամ , չեմ հեռանար , ատ իմ գործս է , բաւ քիթը բերանը թթուեցնելով , Դո՛ք ըսէք , ուղեցէք ի՞նչ որ կուզէք ինձմէ . . . մինչեւ անգամ Միտհատ փաշան կուպուած բեկել . . . Մաքէտօնսքին անօթութիւնէ կը փախչի եւ ոչ թէ մահէն : Եթէ դեռ չէք ձանչցած դիս , ձեզի համար աւելի վատ է :

Մաքէտօնսքին զայրոյթով ուրբել սկսաւ իր պիտիերը :

— Առանց պ՛տճառի չէ , ինչո՞ւ ի զուր տեղը կը փրփրիս , մէկէն պատասխանեց Վլաւտիքով շեշտակի , կարեւոր ու լուրջ գործ մըն է , Պէտք պիտի ըլլայ Պրախլայի ու շրջակաները ցրուած բոլոր աղաքները հաւաքել , որ Պոլսէն համախմբուածներուն հետ միանան : Մաքէտօնսքի այս քու գործդ է :

— Կընդունիմ : Ես կը ժողովեմ եւ անձամբ պէտք եղած տեղը կը տանիմ , ըսաւ Մաքէտօնսքին , իրեն

յանձնուած պաշտօնէն հրապուրուած :

— Է , յանձնատու կըլլաս : Մաքէտօնսքի :

— Վերջացած է :

— Բայց միջոցները ո՞րտեղէն պիտի տրուին , հարցուց Պրըջքով :

Վլաւտիքով խոր կը մտածէր : — Նամակին մէջ այդ բանը չեն յայտնած : Սատանա՛ն տանի , աղաքներուն հազուադէպ ու սնունդին ո՞վ միջոցներ պիտի տայ :

Մաքէտօնսքին խորհրդաւոր կերպարանք մը առնելով ու կարեւորութեամբ մը պատասխանեց :

— Այս սեռակ գործերուն համար միջոցներ չեն տրուել այլ կառնուին . . .

Վլաւտիքով հարցական ձեւով անոր նայեցաւ :

— Ըսածդ չեմ հասկնար :

— Եթէ չես հասկնար , ըսել է , ես գիտով ե՞մ որ բերնէս ելածը չեմ գիտար . . . ձեռքերը գրպանը դնելով , անկիւն մը նստաւ արքած :

Մաքէտօնսքին միշտ արքած ժամանակ , առջի վարկեաններու սաստիկ զուարթութիւնէն յետոյ , մոայլ գրութեան մէջ կիլիսար , Այդ իր բնա-

հազուած սենեակին մէջ յուզուած ու զայրացած կը շրջապայէր :

— Պրըջքով , ըսաւ իր բարեկամի մօտ կանգնելով , այս գիշեր հոս փորձանք պատահեր է :

— Փորձանք :

— Բոլոր զգեստներս դողցուած :

— Ա՛հ , ըսաւ Պրըջքով , հապտ ես բան մը չեմ լսած :

— . . . Ի՞նչ , բոլոր զգեստներն ալ :

— Բոլորն ալ , կըր գիշերը վերադարձայ կարմէրօպս ամբողջ գատարկուած գտայ , Մաքէտօնսքին ե՞րբ դնաց :

— Չեմ գիտեր ե՞րբ երթալը , քնացած էի :

— Այս Մաքէտօնսքին գործն է , կերպուած որ այս խախտը ան խառնած է :

Թարգմ. Պ. ՄԻՐԷՄԾԵԱՆ

(Շարունակելի)

Թէեւ, ըստ յայտագրին, հինգ- շաբթի օր Վառնա պիտի այցելէր, բայց թաղապետութենէն տրուած պաշտօնական յայտարարութիւն մը իմացուց որ Մեծ Իշխանի Վառնա մուտքը ուրբաթ օրուան ձգուած էր:

Ամբողջ քաղաքը չորեքշաբթիէն ի վեր արդէն շքեղապէս զարդարուած էր պուլկարական և ուսական դրօշակներով, նաև մատուցէն մինչև պուլկարական մեծ եկեղեցին և Բիրօթաքա փողոցէն մինչև Շէտթի Սէբատմարի փողոցը, ուր յաղթական շքեղ կամար մը կը բարձրանար ուսերէն և պուլկարերէն արձանադրութիւններով, ամբողջովին դրօշազարդուած: Կամարին ճակատը պուլկարական զինանշանը կը փայլէր դափնիներու մէջ առնուած: Ուրբաթ առաւօտ, 8 1/2ին, Մեծ Իշխան Ա. Միխայելովիչ, Իշխան Թէրտիւնանտի ընկերակցութեամբ և բազմաթիւ բարձրատիճան հետեւորդներով՝ հասաւ յաղթական կամարին տակ՝ ուր Վառնայի թաղապետը, օտար պետութեանց ներկայացուցիչները, պուլկարական Եռանքի ընկերութիւնը, պուլկար յեղափոխութեան կենդանի անդամները զինքը դիմաւորեցին: Թաղապետը ազուհաց մատուց Մեծ Իշխանին, որ յետոյ կարգաւ բարեւեց ու խօսեցաւ բոլոր ընկերութեանց գլխաւորներուն հետ:

Ն. Կ. Բարձրութիւնը, յետոյ, ճամբան շարունակեց դէպի պուլկարական եկեղեցին՝ որուն մուտքը մասնաւոր տոմսակներով էր: Հոն ալ պուլկար եկեղեցական մարմինը, ինչպէս բոլոր օտար դաւանանքի ներկայացուցիչները զինքը դիմաւորեցին: Ժամը 10 1/2ին Մեծ Իշխանը կրկին Բիրօթաքա փողոցէն եկաւ զօրանոցին առջև, ուր զինուորական հանդիսաւոր անցք մը կատարուեցաւ: Ամբողջ Վառնան դաշտը լեցուած էր: Եամպօլէն, Շուճլայէն եկած ձիաւոր, հետեւակ և թնդանօթացիք զօրախմբեր արդէն կազմ ու պատրաստ կը սպասէին: Երկու անգամ զինուորական անցք տեղի ունեցաւ: Մեծ Իշխանը բոլոր զօրախմբերը բարեւեց, յետոյ զոհունակութիւն յայտնեց Իշխանին և պատերազմական նախարար Փափրիքովին, ինչպէս նաև միւս նախարարներուն: Զօրանոցը այցելելէն ետքը, Ն. Կ. Բարձրութիւնը զինուորներուն մէկ քանի քաջալերական խօսքեր ըրաւ և ընդհանուր «հուրրա՛ններու մէջ, մեկնեցաւ ուղղակի ուսական հիւպատոսարանը: Ճասը վայրկեան հանդիստէ մը ետքը, հիւրերը մեկնեցան դէպի նաւահանգիստ, քարափը այցելեցին և «նառնէմտա՛հի մէջ նախաճաշելէ ետքը,

թնդանօթներու որոտի մէջ, գացին չոգեմակոյկով լիճը այցելելու: Յետոյ Մեծ Իշխանը մեկնեցաւ դէպի Կէպէճէ:

Երեկոյեան ամբողջ Վառնան լուսազարդուած էր: Քաղաքին զանազան կեդրոններուն վրայ հրախաղութիւններ տեղի կունենային: Ժողովրդի խումբ բազմութիւն մը ծովեզերեայ պարտէզը հաւաքուած էր, ուրկէ կը դիտէր ելեքտրական լոյսերու մէջ շողացող էլեքսինօկրատն ու կայսերական զրահաւորը: Կէս գիշերուան թնդանօթի որոտներուն ձայնով, հրախաղութեանց և ելեքտրական լոյսերու շողոշումին մէջ, կայսերական հիւրերը մեկնեցան դէպի Պուրկազ, ուր նոյն շքեղութեամբ ընդունելութիւն մը պատրաստուած է արդէն:

Մեծ Իշխան Միխայելովիչ Սիւրբօրի և Ահիօլաի փոքրիկ նաւահանգիստներն ալ այցելելէ ետքը, պիտի մեկնի Բէօսթէնձէ անկէ կրկին Ռուսիա անցնելու համար:

Սեւ Շոփու ուսական նաւատորմի Վառնա պիտի այցելէ յառաջիկայ յուլիս 23ին:

ԱՉԱՏ ԲԵՍ

«ԻՐԱՒՈՒՆՔՆԻՆ»

Այս թերթին խմբագրութիւնը, քանի մը եօթնեակներ առաջ, տեղւոյս երիտասարդութեան ի նպաստ Ազգ. վարժարանի սարքած թատերական ներկայացման առթիւ հրատարակած անճահ քննադատականին կցած էր սպառնալից զիտոյութիւն մը, որով թատերական մասնախմբի անդամները կամացուկ մը փողոցի մանչերու կարգ անցնել ուղած էր:

Այսու չեմ ուզեր ընել պատմութիւնը այդ առթիւ բոլոր անցած դարձածներուն, որ լոկ կը կնտութիւն մը պիտի ըլլայ: այլ անօրակելի աներեսութիւն մը մատնանիչ ընելով՝ կուգամ բուռն զայրոյթս ու զգուանքս յայտնել հանդէպ խմբագիր ըսուած մարդու մը, որ ստախօսելու մէջ շափ ու սահման չուզէր ճանչնալ:

Լռեցի մինչև այսօր ինձ ու ընկերներուս եղած անարգանքին ու անուանակութիւններուն հանդէպ, նախ՝ կարծելով որ այդ թերթի խմբագրութիւնը չարամիտ տեղեկատուներու զոհ եղած ըլլայ, ու յետոյ՝ յուսալով որ իր սխալը ըմբռնած՝ պիտի ջանայ ուղղել զայն: Սխալած եմ եղեր: Հիմակ ալ հասկցայ ամէնը, չեմ կրնար զսպել իմ սրդար զայրոյթս ու կուգամ ներկայիս կրօշ մը թուքով անամօթ մակդիրը փակցնել ստախօս ու անուանակիչ խմբագրին:

Չէք ամչնա՛ր արդեօք, Պ. խմբագիր, որ ձեր անուանակիչ գիտօղութեան համար ձեզմէ ուղուած բացատրութեան պատասխանելէ յետոյ՝ թէ «գալտնիք» բառը «պատճառ» իմաստով գործածած ըլլալով (օհօ) չէք ուզած ոչ ոքի անպատուութիւն անարկութիւն մը ընել, և թատերասէր մասնախումբի վրայ լաւ համարում ունենալիդ հաստատելու համար, «եթէ ես քոյր մը ունենայի, ձեզի պէս պատուաւոր ու ազնիւ երիտասարդներու հետ խաղալ տալու չէի վարաներ երբէք» ըսելէ վերջ, աներեսութիւնը կունենաք այդ միեւնոյն երիտասարդները թատրոնի վարկըն ու պատիւը արատաւորողներ անուանելու:

Չէ՞ք ամչնար, դուք, ցեխտակով մաքուր ու անարար դէմքեր, որոնց միակ յանցանքը եղած է, հանրութեան օգտակար ըլլալու տենչով, զոհօղութիւններ ընել:

Վերջապէս չէ՞ք ամչնար որ վեց հոգիի ներկայութեան ձեր խօսածներու խեղճութիւնը դուք իսկ ընելով, ուրիշին կը վերագրէք:

Ամչնա՛ք, դո՛ւք: Չէ, «փառսուն», եթէ ամչնալու սուռած ունենայիք, շատոնց կաս կարմիր կարած՝ լեզունիդ բերանիդ քաշած ու գրիչնիդ ձեռքերնիդ նետած՝ կը դադրէիք հրապարակը ցեխտակէ: Է՞ ուրեմն, դեռ յայտնութիւններ ունիմ կըսէք: շուտով անոնք ալ առանց խնայելու, ու եթէ կուզէք «թոփտան» ըրէք, որ բերաննուդ «փայն» ալ «թոփտան» առնէք, զրչի «ապալոյնիքներու» բաժինը եղող մեր թուքին հետ մէկտեղ:

Կ. Շարահիստեանց Վառնա, 26 յունիս

ԱՉԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Արաբկիրէն «Արմէնիա»ի կը հաղորդեն թէ քանի մը սրիկայ թուրքեր Արաբկիրի առաջնորդ Մուշեղ Մ. վարդապետի վրայ յարձակում ըրեր են, զայն սպանելու համար, բայց չեն կարողացած: Մուշեղ վարդապետին յանցանքը եղած է կառավարութեան առջև իր հարստահարուած ժողովրդին իրաւունքները պաշտպանելը: Սպաննութեան փորձը տեղական իշխանութեան գաղտնի թելադրութեամբը պատրաստուած կերեւայ: Մուշեղ վարդապետ Արաբկիրէն Պօլիս պիտի մեկնի:

— Եգիպտոսի առաջնորդ տեղական դատարաններու առջև ամբաստաններ է «նոր-Օր» թերթին խմբագրութիւնը, որ յողուածով մը քննադատած էր առաջնորդին ընթացքը և առաջ-

նորդական գործերը: Տեղական թերթերը մեծ օգուտութեան մէջ են, ոմանք առաջնորդ քարացնելու և ոմանք ալ մեղաւոր ներկայացնելու համար: Կերեւայ թէ Եգիպտոսի ալ հնութիւններէն շատ չախորժիր, թէեւ հնութեանց ամենէն հսկաներուն քով կը բնակի: Դեռ հազիւ քանի մը ամիս անցաւ, երբ չի տեսնուած ընդունելութեամբ մը իրենց նոր առաջնորդին ընդ առաջ կերթային: Որքա՛ն ալ շուտ հոտեցաւ:

— «Մշակ» կը տեղեկանայ թէ յառաջիկայ կովկասեան ցուցահանդէսին մէջ տեղի ունենալիք համերգներուն հայկական բաժնին կարգադրութիւնը յանձնուեր է նշանաւոր երաժշտապետ Կարա Մուրզաի, որ երկու ամսուան մէջ 30 համերգ պիտի պատրաստէ: Իր ծրագրին մէջ, բացի հայերէնէ կերեւան նաև քրթերէն եւ թուրքերէն երգեր ալ:

— Յունիս 5ին Բեթերսպուրկի մէջ առաջին անգամ տրուեր է նշանաւոր հայ երիտասարդ քոմբօզիթէօր Ալեքսանդր Սպենդերեանի մէկ հեղինակութիւնը, որ մասնագիտական մեծ ճաշակով և հմտութեամբ պատրաստուած ըլլալուն, մեծ ազմուկ հաներ է հասարակութեան մէջ, Ա. Սպենդերեան երիտասարդ երաժիշտ մըն է, հմտ տարեւելեան և հայկական երաժշտութեան: Կրնանք յուսալ որ մեր տոհմային երաժշտութիւնը մեծ զարկ պիտի ստանայ իր ջանքերուն շնորհիւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ն
Սլիվնէի փաստաբաններէն Տօքթ. Նէյօֆի նախաձեռնութեամբ 100 փաստաբաններ հրաւիրուած են ամբողջ Պուլկարիայէն՝ Պօրիս Սարաֆօֆի գաղափարապայմաններու համար Սօֆիայի նահանգային դատարանի առջև: — Կրտսի թէ Ռուսիոյ կայսերական պանքան 6—8 միլիօն ֆրկան խալճար մը պիտի ընէ Պուլկարիայ իր նոր ծախքերը գոցելու համար:

Մեծ Իշխանի ընդունելութեան նկարագրութեան պատճառաւ, ստիպուեցանք այս անգամ յապաւել լուրերու բաժինը:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

Ի նպաստ Պ. Երկի Տալէլի պիտի ներկայացուի այս գիշեր բնասնական երեկոյի, Ենովէվա, 6 արար բանաստիճա, քանթօ եւ տուէթ Օր. Գաթինայի կողմէ:

Իրտ ծիծաղաշարժ զաւելտ Չարար ամբողջ խմբին կողմանէ ՍԻՐՈՅ ԽԵՆԹՈՒԹԻՒՆԸ:

ОТГОВОРНИКЪ:
Д-ръ М.Х.Г.ХРДИЧЪ ВАРГАНЪ
Печ. Взаимность — Варна.